## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԳՈԼԴՍ ՋԻՄ» ՖԻՏՆԵՍ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋԵՎ

***Հաշվի առնելով,*** որ Կողմերն ընդունում են սպորտի ոլորտում փոխադարձ համագործակցության ապահովման ձգտումը.

***Կարևորելով*** ուսանողների և ապագա մարզիչ–մանկավարժների՝ պրակտիկ ոլորտում կարողությունների զարգացումը.

***Ընդունելով*** Կողմերի պատրաստակամությունը համատեղ կրթական, գործնական միջոցառումների իրականացման, համատեքստում.

***Հիմք ընդունելով*** սույն հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

**Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝**

### 1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

### 2. Համագործակցության ուղղությունները

2.1 Ինստիտուտը պատրաստակամ է սպորտի ոլորտում պրակտիկ թեմաներն առաջարկել ուսանողներին՝ ամբիոններում և տեղերում հետազոտություններ իրականացնելու, իսկ «Գոլդս Ջիմ» ֆիտնես կենտրոնը (այսուհետ՝ Գոլդս Ջիմ) պատրաստակամ է գործուն և առարկայական աջակցություն ցուցաբերել Ինստիտուտի հետազոտություն իրականացնող սովորողներին:

2.2 Սույն Հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.2.1 Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում,

2.2.2 նորարարական, ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.2.3 սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.2.4 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման ոլորտում,

2.2.5 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման շուրջ,

2.2.6 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու ուղղությամբ:

## 3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

## 4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2020թ. դեկտեմբերի 15 -ին:

4.6 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

## Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

| Կողմ 1 | Կողմ 2 |
|---|---|
| «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ | «Գոլդս Ջիմ» ֆիտնես կենտրոն |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 11, 0070 | ք. Երևան, Կոմիտասի պող., 40/1, 0051 |
| ռեկտորի ժ/պ՝ Դավիթ Խաչատրյան | գործադիր տնօրեն՝ Ավետիք Գրիգորյան |
| ստորագրություն, Կ.Տ. | ստորագրություն, Կ.Տ. |